



ՍՈՒԿԱՆԱՀԱՅ ԳԱՂՈՒԹՐ ԱՅՍՈՐ

Սուրանահայ գաղութը իր պատմությունը կերտած է վերջին հիսնամյակին: 1902 թվականին սկսյալ հայեր սկսած են գաղթել Ափրիկեի կեդրոնը գտնվող երկիրը՝ Սուդան, և հոն կազմել գաղութ՝ մը: Սկզբնական թվականներուն Սուդան հաստատվող հայերու մեծամասնությունը եղած են արարկիրցիներ և կեսարացիներ: Այս երկրին մեջ հայ գաղութը

աճած է առաջին համաշխարհային պատերազմին վերջ. այսօր սուդանահայ գաղութը իր մեջ կհնարվե մոտավորապես 800 հոգի, շուրջ 200 ընտանիքի վրա բաշխված: Ընդհանուր այս թիվին 635 հոգի կբնակին մայրաքաղաք Խարթումի և Օմդուրման քաղաքին մեջ, իսկ մնացյալ մասը կբնակի գյուղերուն մեջ:

ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա) Սուդանահայ գաղութային ժողով.— Սուդանահայ գաղութային ժողովը կրազկանա յոթը հոգիներե, որոնք կընտրվին երեք տարին անգամ մը գաղութահայության կողմն: Ան իրավատերն է ազգային անշարժ և շարժուն կալվածներուն ու պատասխանատուն է պետության առջև՝ որպես ներկայացուցիչը սուդանահայ գաղութին: Ժողովին կնախագահն օրվան հոգևոր հովիվը: Սուդանահայ գաղութային ժողովի ներկայի անձնակազմը հետևյալն է. պր. պր. Գրիգոր Պոտուրյան՝ ատենապետ, Թորոս Պարսամյան՝ փոխ-ատենապետ, Տիգրան Հարությունյան՝ ատենադպիր, Միսակ Փափազյան՝ փոխ-ատենադպիր, Նազարեթ Օմյուրյան՝ դանձապահ, Լևոն Չոլաբյան՝ խորհրդական:

Ըստ կանոնագրի, ժողովը ունի հետևյալ իրավասությունները. վերին հսկողություն սուդանահայ ազգային գործունեությանը և միություններու, հսկողություն գաղութի հանդարտության և համերաշխության վրա, ի պահանջել հարկին միջամտություն գաղութին մեջ որևէ ազգային գործունեության, քննարկում կատակային, ամուսնական և անձնական խնդիրներու:

Սուդանահայ գաղութային ժողովին կբխին եկեղեցվո և դպրոցի հոգաբարձություններու, որոնք ենթակա են անոր տնօրինության:

Բ) Եկեղեցվո հոգաբարձություն.— Եկեղեցական հոգաբարձությունը կնշանակվի գաղութային ժողովին կողմն: Ան կհսկե եկեղեցվո և գերեզմանատան գործառնությանը: Ներկայի անձնակազմն է. պր. պր. Պարույր Կյուժյուրյան՝ ատենապետ, Վաղինակ Լուսինյան՝ ատենադպիր, Հայկ Տեր-Պետրոսյան՝ դան-

ձապահ, Երվարդ Ընթապապյան՝ խորհրդական, Ավետիս Մարկոսյան՝ խորհրդական:

Գ) Գյուրոցի հոգաբարձություն.— Գյուրոցի հոգաբարձությունը ևս կնշանակվի Գաղութային ժողովին կողմն. ան կհսկե ազգային վարժարանի ուսումնական, վարչական և տնտեսական գործունեությանը վրա. ներկայի անձնակազմն է. պր. պր. Հայկ Պոտուրյան՝ ատենապետ, Գևորգ Պըլլըբյան՝ ատենադպիր, Նշան Բարձիկյան՝ դանձապահ, Հակոբ Խաչիկյան՝ փոխ-դանձապահ, Եփրեմ Պենկյան՝ հաշվապահ:

Դ) Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի և Ե) Խարթումի ազգային վարժարան.— Եկեղեցիին ու դպրոցին շենքերը միացած են առանձին բաժանումներով և հարմարություններով. հողն ու շենքը ազգային կալվածներ են. հողը, մոտավորապես 6 000 քառակուսի մետր, նվիրված է հայ գաղութին Սուդանի կառավարության կողմն: Եկեղեցիին ու դպրոցին շենքերը սկսած են շինվիլ 1953-ին և լրացած են 1956-ի վերջավորության: Եկեղեցվո հիմնարկիցը կատարված է 1953-ին և օծումը՝ 1957-ին, ձեռամբ եղիպտահայոց առաջնորդ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Միրունյանի, ի ներկայության դպտիներու երկու առաջնորդ արքեպիսկոպոսներուն, Անգլիկան եկեղեցվո առաջնորդին, ապա եկեղեցիներու դանադան ներկայացուցիչներուն, իսլամական կրոնի պետերու ներկայացուցիչներուն, Սուդանի կառավարության ներքին գործոց նախարարության ներկայացուցիչին և Խարթումի նահանգի կառավարչի ներկայացուցչին, անգլիական, ռուսական, հունական և իրաքյան ղեսպաններու:

Եկեղեցվո ղ դպրոցի զուլգ շենքերը կառուցվեցան գաղութի ազգայիններու կարևոր աշակցութեամբ և բարերարութեամբ Սեֆերյան ընտանիքի ի հիշատակ ողբացյալ Գրիգոր Սեֆերյանի: Եկեղեցվո դռան վրա կահտեկյալ արձանագրութիւնը:

«Ողորմութեամբն Աստուծոյ կառուցաւ տաճարս տէրունեան հուրեայ յանուն Հօրն հաւատոյ Հայաստանեայց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, ի մայրաքաղաքի աստ Սուտանի, ի Խարթում, ի վայելս Ազգին Հայոց, արդեամբ և ծախիւք բարեպաշտունի տիկին Զուարթի Սէֆերեան և հարագատի հորին Յակոբայ, Խարդամույ և Եղուարդի, ի հանգիստ հեզույ ամուսնոյն և Հօրն իւրեանց Գրիգորի Սէֆերեան հանգուցելոյ, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի:

Ի հայրապետութեան Ամենայն Հայոց Ս. Տ. Վազգենայ Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսի, ի պատրիարքական տեղապահութեան Սրբոյ Սրուսաղեսի Ս. Տիրանայ Սրբ. Արք. Ի, ի պատրիարքութեան Կ. Պոլսոյ Ս. Գարեգնի Սրբ. Արք. Ի, յառաջնորդութեան հայոց Եգիպտոսի Ս. Մամբրէի Սրբ. Արք. Ի, յամի Տեառն 1957 և ի մերումս բուակեանութեան ՌնՁ»:

Եկեղեցվո շենքը կառուցված է վայելուչ կերպով ու հայկական ոճով. ունի ամեն հարմարութիւն, զգեստներ, անոթներ և այլ կարասիներ:

Դպրոցի շենքը ունի սրահ մը, տեսչարան մը և շորս դասասարհներ: Կրթական ծրագիրը բաժնված է մանկապարտեզի և նախակրթարանի բաժիններու: Մանկապարտեզին մեջ կան երեք դասարաններ տասնմեկ աշակերտներով, իսկ նախակրթարանին մեջ՝ հինգ դասարաններ երեսուներեք աշակերտներով: Դպրոցի ավագ ուսուցիչն է պր. Հովհաննես Եթենեգյան: Ուսուցչական կազմը բաղկացած է շորս հոգիներն:

Վարժարանին մեջ կավանդվին հայերեն, արաբերեն և անգլիերեն լեզուները, թվաբանութիւն, հայոց պատմութիւն, կրոն, աշխարհագրութիւն, գիտութիւն և երգեցողութիւն: Եկեղեցվո ղ դպրոցի համար անշարժ և եկամտաբեր կալվածներ չկան. հանգանակութիւններով կհակակշռվի անոնց բյուրջն:

Եկեղեցվո ղ դպրոցի զուլգ շենքերը արժած են 26 000 անգլիական ոսկի:

Զ) Հայկական ակումբ.— Հայկական ակումբը բակ մըն է իր շենքով, որ կժառայի

գիշերային ժամանցի. ազգային կալված մըն է, զոր վարձած է ակումբը ազգային իշխանութեանն: Ակումբը ունի իր վարչութիւնը հինգ հոգիներէ բաղկացած. անդամներուն թիվն է 65:

Է) Հայ երիտասարդաց միութիւն.— Այս միութիւնը հիմնված է 1940-ին: Իր տրամադրութեան տակ ունի «Ճշմանտ» անունով մարզարան մը. հողը, տարածութեամբ 16 000 քառակուսի մետր, նվիրված է միութեան կառավարութեան կողմէ: Մտադրված է այս հողին վրա կառուցանել նոր մարզադաշտ մը և շենք մը. ներկա մարզադաշտը և շենքը տարիներէ ի վեր կժառային իրենց նպատակներուն որոշ բավարարութեամբ: Միութեան նպատակն է հավաքել երիտասարդութիւնը և անոր մեջ պահել հայկական ոգին, մարմնամարզութեան և մշակույթի ուղիներով:

Ը) Հայ բարեսէր տիկեանց միութիւն.— Միութիւնը հիմնված է 1952 թվականին. անդամներուն թիվն է 100. ունի իր վարչութիւնը. միութեան հավաքավայրն է «Ճշմանտ» մարզարանը: Միութեան նպատակն է աշխատիլ եկեղեցվո բարեգարգութեան համար, ըստ որում իրենց եկամուտին մեկ շորրորդը կհատկացնեն եկեղեցիին, նաև օգնել խեղճերուն, որոնց կհատկացվի եկամուտին կեսը. մնացյալ քառորդը կհատկացվի միութեան ծախքերուն:

Կտակված և կտակելի կալվածներու հարցը կխանդավառե ազգային իշխանութիւնը: Սուղանահայ գաղութային ժողովին կողմէ մասնավոր ջանքեր կտարվին կտակներ ապահովելու ուղղութեամբ:

Պետական շրջանակներու և հարանվանութեանց հետ հարաբերութիւնները սերտ են և համերաշխ: Մինչև հայոց Ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիին կառուցումն ու օծումը, հովվական ու ծխական պարտականութիւնները սիրով հանձն առնվեցան Անգլիկան և Ղպտի եկեղեցիներուն կողմէ:

Սուղանահայ գաղութին հովվական այցելութիւններ տված են հետեկալ հոգևորականները. ամենապատիվ Ս. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյան, Ս. Մամբրե արքեպիսկոպոս Միրունյան, Ս. Պարզե եպիսկոպոս Վրթանեսյան, Ս. Զավեն վարդապետ Արզումանյան, Ս. Խորեն քահանա Մելիք-Շահ, Ս. Հուսիկ քահանա Նշանյան և Ս. Պետրոս քահանա Ֆերեճյան:

ԶԱՎԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

